ՆՈՐ-ԴԱՐ

№ 200 ՏԱՍՆՕՐՅԱՑԻՐԴ ՏԱՐԻ Հինգշաբթի 20 Նոյեմբերի 1897 Հինգշաբթի 20 Նոյեմբերի ՏԱՍՆՕՐՅԱՑԻՐԴ ՏԱՐԻ № 200

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ.
ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը.

Խմբագրութեան հասցէն Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis. Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մեծ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների բառին 2 կ., բեկլամների համար կրկնապատիկ.

ՆՈՐ-ԴԱՐ

ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Քաղաքական-դրական ամենօրեայ Թերթը առաջիկայ **1898**-*ին կրհրատարակուի Թիֆլիսում նոյն ձեւրով և ծրագրով ամեն օր, բացի կիրակի և մեծերին հետեւող օրերից։*

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը 6 րուբլի, Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ. Թիֆլիսում՝ 1 ր.

ԵՒՐՈՊԱՑԻ և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՑԻ բաժանորդները վճարում են տարեկան 8 դոլլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից միայն։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում հետեւեալ «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Լորիս-Մելիքեան փողոցում պոստ-հեռագրատան մօտ։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանն այս հասցէով **Тифлисъ въ редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“** *կամ* Tifils (Caucase), rédaction de journal „Nor-Dar“

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

— Առջնորդը։— Աւստրիա-Ունգարիա։
Հառաչանքների արձագանք։
Քրոնիկոն.—Լուրեր։
Գերմանական մի Թերթ հայը Օլիւեանի մասին։
Հայոց Յաւերտն Բագւում։
Թղթակցութիւններ.—Կրաս. նավահգ։
Քաղաքական. — Թիւրքիա։ Սկանդալները աւստրիական պարլամենտում։ Պապիտան Դրայֆուսի գործը։
Հեռագիրներ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 19 Նոյեմբերի, 1897 թ.

ՈՒՄՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ

Ամբողջ բազաբական աշխարհն առանձին ուշադրութեամբ հետեւում է աւստրիական պարլամենտի նիստերին.— դեռ չտեսնուած կռիւներ են տեղի ունենում աւստրիական ռայխստագում և միանգամից պարլամենտական կարգերի վարկը վայր ձգում։

Բազմերի մինիստրութիւնը յենւած չեխական ու կղերական և մեծ կալուածատէրերի կուսակցութեան վրայ, ահագոբգան ժամանակ է, որ աշխատում էր միատիր կերմանական կուսակցութիւնը խաղաղեցնել և մեծամասնութեան վճռին հպատակացնել, բայց չի յաջողւում։

Աւստրիայի մէջ ներքին կռիւը ազգայնութեան կռիւ է. Հաբսբուրգի կայսերութեան մէջ բնակւում են զանազան ազգեր, բացի գերմանացիներից և սլաւեան ազգերից, ինչպէս չեխերը, լեհացիները, սլովակները, քորւատները և այլն, որոնք ազգային գիտակցութեան հասնելով, ձգտում են այն դրութեան հասնել, ինչ դրութեան հասել են ունգարները։

Չեխերը մասնաւորապէս 1867 թուից չեն կարողանում հանգստանալ, որ Աւստրիայի կայսրը առանձնապէս Ունգարիայի թագաւոր օծուեց, իսկ Բոհեմիայի թագաւորութիւնը դեռ չէ վերականգնած և չեխերն իրենց հայրենիքում այն դի քը չունին, ինչ որ ունին ունգարները Ունգարիայում։

Գրաֆ Բադենին չեխերին գոհացնելու համար, առանց պարլամենտական որոշումի, մինիստրական կարգադրութեամբ Բոհեմիայում չեխերէն լեզուն գերմաներէնի հաւասար ճանաչեց։

Այդ կարգադրութեան միտքը հասկանալու համար պէտք է ծանօթ լինել աւստրիական ներքին կեանքի և առանձնապէս Բոհեմիայի անցեալի և ներկայի հետ։

Գերմանացիները դրաֆ Բադենիի լեզուների վերաբերութեամբ այդ կարգադրութիւնը դատապարտութիւն համարեցին և ճնշումն գերմանական լեզուի։

Լեզուների այդ կարգադրութեան համար է, որ այսօր աշխարհի առաջ կատարւում են Վիեննայի պարլամենտում դեռ չտեսնուած սկանդալներ. խոլերը գլխին, ըստ ինքեան կրճատած պատգամաւորներ քաղաքական կրքերից դրդուած այն աստիճան իրենց գլուխը կորցրել են, որ փողոցային հայհոյանքներից սկսած մերկ սրերին դիմելով միմեանց կատորել են ուզում։

Պարլամենտական այդ կռիւները վարակել են. կռիւը Վիեննայի փողոցներն է անցել և այնտեղից աւստրիական միւս քաղաքները. ուսանողներ և քաղաքացիներ ցոյցեր են անում, գերմանացիք, չեխեր և լեհացիք միմեանց ջարդում, անպատւում են։

Անտանելի է Բոհեմիայում բնակուող չեխերի և գերմանացիների դրութիւնը. դրանք միմեանց դէմ կանգնած են իրրև անհաշտ թշնամիներ հէնց այդ լիսուների խնդրի համար։

Որովհետև այս բոլոր կռիւը չեխերի պատճառովն է և նրանք իրաւունք ունին իրենց լեզուի համար կռուելու և աշխատելու, որ իրենց երկրում տիրապետող լեզուն չեխերինը լինի,— այդ մասին ուրիշ անգամ կը խօսենք։

Այժմ պարլամենտական անվերջ կռիւների և սկանդալների հետեւանքն այն եղաւ, որ դիմադիր գերմանական կուսակցութիւնը իւր նպատակին հասաւ. նա ժողովուրդը յուզեց, կրքերը շարժեց, պարլամենտական նիստերը խափանեց և դրանով բադենիի մինիստրութիւնը խորտակեց։

Դիմադիր գերմանական կուսակցութիւնը, ինչ գնով էլ լինի, մտքումը դրել էր գլորել առած մինիստրութիւնը, և նա գլորեց։

Ինչքան էլ որ դատապարտելու լինինք գերմանական կուսակցութեան ներկայացուցիչներին, ինչքան էլ որ արհամարհանքով վերաբերուենք պատգամաւոր Ֆոյգֆի, Շենեռերի և այլոց կոպիտ արարքներին, բայց չենք կարող ուրանալ, որ դրանք անձնական ատոր շահերի համար չէ, որ իրենց կեանքը հրապարակի վրայ են դրել։ Նոյնը կարելի է ասել և չեխ պատգամաւորների մասին։

Մարդիկ գործում են համոզմունքի համար, որոշ գաղափարի համար։

Ի հարկէ, Բադենիի մինիստրութեան անկումով դեռ բան, վիճելի խնդիրը չլուծուեցաւ. ոչ չեխերը կը համաձայնուին միանգամ ձեռք բերած իրաւունքը կորցնելու, ոչ էլ գերմանացիները կը համաձայնուին գերմանական լեզուն, որ տիրոյն է եղել, տատրակելու չեխերէնին։

Ո՛վ է այն իմաստուն պետական անձը, որ կարողանայ դրանց համաձայնեցնել,—կը տեսնենք։ Գալիք կայ։

ՀԱՌԱՉԱՆՔՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔ

«Եղբայրական օգնութիւն» յայտնի ժողովածուն իւր անօրինակ ու մխիթարական ազդեցութիւնն ամենուրեք տարածում է, տարածելով հանդերձ և ժողովրդի, կազմողի բարի անունն ու յիշատակը։ Այդ սքանչելի գիրքը խաչակիր ժողովրդի ճանապարհը լուսաւորող լապտերն է, Թրքական Golgotha-յի բարձունքում անմռունչ ու արիւնլուայ կանգնած նահատակներին լուսով հեղեղող արեգակն է, մի մոռացուած ազգի հին ու նոր յիշատակները «ի խաւարէ ի լոյս», «յանգիտութենէ ի դիտութիւն» կոչող հզօր ձայնն է. այդ գիրքը մի սգաւոր քարոզիչ է, մի հոգեշունչ նուիրակ առ ժողովուրդս Մեծին Ռուսիոյ, որ գան ու նոր ներոնի պաթիզի թանձրապատ խաւարը փարատող կենդանի լապտերները տեսնեն· այնտեղ, այն վսեմագոյն լուսից թափուր վայրում, ուր անպարտ հայ ժողովուրդն է վառւում. Սքանչելի նուիրակ, որ իւր վհոյ նպատակին սաւառնելով հասաւ. նրա արձակած հզօր ձայնին արձագանք տուեց ռուս ժողովրդի մարդասէր ոգին, ամենուրեք մամուլը զօրացը րեց այդ արձագանքն ու հրաւէր կարդաց իւր ազգին ուխտաւորի ցուպ վերցնել, հետեւել տառապեալ ժողովրդի հր բաւիրակին ու գնալ մի կողմից Ռուսիոյ Դահին հաւատարիմ, նրա փառքը տարածող հնադարեան ազգի հին ու նոր յիշատակների թանգարանը տեսնել, միւս կողմից անօբէնութեան անձրևած չարիքը գիտել թրքական կրկէսում նոյն ժողովրդի, հաւատոյ եղբարց կողոպտուած լերկ մարմինների վրայ։ Լրագրութեան այդ ընտիր բանակին միացան և Օդեսայի Թերթերը „Одесскій Листокъ» և «Одесскія Новости»։

Թոյլ տուէք, ձեր խմբագրապետ, թարգմանութեամբ ձեր պատուական Թերթին յանձնել սրանից առաջի «Օդեսայի Թերթի» տաղանդաւոր աշխատակցի Վ. Դորոշևիչի յօդուածը, որ «եղբայրական օգնութեան» հաղորդած հայկական հաւաքածոյի առջևաբանն է։

«Ամենքի յիշողութեան մէջ դեռ թարմ են «Բարդուղիմէոսեան օրերը», որոնց ենթարկուեցաւ Թիւրքիայի հայ ժողովուրդը։ Այդպիսի յանցագործութիւնները չեն մոռացւում։ «Արիւնը, ասում է Մէֆիստոֆէլը, բոլորովին այլ տեսակի հիւթ է», և մարդկային արիւնով գրուած տողերը երբէք չեն ջնջւում պատմութեան էջերից։ Դեսպանների միաբան հաշուից երեւում է, որ 37,000 հայ է կոտորուել Երևանն և Եօթ հազար. այդպիսի գումարները պէտք է գրել և թուով և գրով, ինչպէս պարտամուրհակներում է գրւում։ Մակդոլլի հաշուով ոչնչացել են ոչ 37,000, այլ 200,000, Թշուառներ, ըստ Զարմբտանի 300,000 ըստ Վիկտոր Բերնարի 500,000, իսկ ըստ «Նովոյէ Վրեմիայի» ոչ մէկը։ Մենք չը նորհաւորում ենք Գ. Սուվորինին (խմբագիր «Նովոյէ Վրեմիայի») և Ռուս անպարտութիւն (այդ քաղութիւնը) և կանգ ենք առնում դեսպանական հաշուի համեստ թուի վրայ, 37,000-ի։

«Եղջանիկ է այն երկիրը, որ այս համաշխարհային Թշուառութեանը օգնութեան կը հասնի և մտքով, և սրտով, և գրամով. ռուս հասարակութիւնն առնում է այդ օգնութիւնը մօտ օրերս լոյս տեսած «Եղբայրական օգնութիւն Թիւրքիայի չարատանջ հայոց» գրքի միջոցով։ Այս գիրքը մեր լայնարձակ երկրի և մեր գրականութեանն արժանի մի հեղինակութիւն է։ Այն ամենը, ինչ որ աչքի ընկնող է մեր լրագրութեան ու գրականութեան մէջ, ժողովուած է մէկ տեղ այս գեղեցիկ, հետաքրքիր խրատական ու հակայական գիրքը կազմելու համար։ Զանազան դասակարգի և տարբեր ուղղութեան գրագէտները մէկ մէկու ձեռք են մեկնել, որ օգնութեան հասնեն այն Թշուառութեան, յանցագործութեան, որի համար կարմրում են մեր դարն ու ժարդկութիւնը։ Գրքում տպուած Թուով 101 յօդուածները ռուս հեղինակներինն են. այս մի վհոյ ողջոյն է ռուսաց գրականութեան կողմից բարեյ և արդարութեան դաւթակներին։ Ռուս հասարակութիւնը պէտք է իւր գրագէտների օրինակին հետեւի. որչափ շատ տարածուի այդ պիսի հրատարակութիւնը, նոյնչափ պատիւ է այն երկրին, ուր ստեղծուել ու բաժանուել է։

«Այդ գիրքը, ինչպէս մի վաւերականութիւն մեր գրականութեան կտած դաշինքի բարեյ և արդարութեան հզի վրայ,—Թանկագին է. բացի դրանից, այդ գիրքը ընթերցողի համար անգին հետաքրքրութիւն է բովանդակում։ Ցայսօր երբէք չի հրատարակուել մեղնում մի այդպիսի ընդարձակ, բազմակողմանի, հետաքրքիր «Ծաղկածոս», որի մէջ մասնակցութիւն ունենային այդքան ականաւոր անուններ ու հեղինակութիւններ։ Այստեղ մենք այն ամենի անուններն ենք գտնում, որոնք սովորաբար մեր հայրենիքի ազն են կոչւում։ Որանից զատ գրքի մէջ բազմաթիւ յօդուածներ կան Հայաստանի մասին, նրա անցեալի ու ներկայի վրայ. այդ օգուածները կարդալով դուք կը ծանօթանաք մի սարսափելի դժբաղդ երկրի և նրա տառապեալ ժողովրդի հետ. իսկ յաճախ ճանաչել մի ժողովուրդ, կը նշանակէ սիրել նրան։

«Գիրքը համապատասխան է այնքարձրագոյն նպատակներին, որոնք նրա լոյս տեսնելու շարժառիթներն են եղել, իսկ գրքի արտաքինը համապատասխանում է բովանդակութեանը։ Գիրքը պատկերազարդ և հիանալի հրատարակութիւն է։ 125 պատկերներից յատկապէս մէկը գրաւում է ձեր ուշադրութիւնը. այդ մի պատմական պատկեր է—Ֆլորեսնը Լիվորնայի հանգստարանում արտասանում է իւր նշանաւոր ճառը ի պաշտպանութիւն հայերի։ Գրքի մէջ զետեղուած բոլոր քերթուածներից ամենաբանաստեղծականը, բոլոր յօդուածներից ամենաբուռն, բոլոր հրատիրակողներից ամենահրապուրիչն այս է։ Որպիսի կորով է արտայայտում այդ ծերուկը, մտքի և զգացմունքի կորով։ Այս պատկերի առաջը գալ էլ առնում ապշութեամբ, հիացմամբ և երկիւղածութեամբ։ Այդ Գլադստոնը, որ առելութեամբ, զզուանքով, սարսափով լի մի շարժմունք է գործում, մարդկութեան մարմնացումն է, գեռ աւելի, այն ամենի մարմնացումն է, ինչ որ լաւագոյն է մարդկութեան մէջ։

«Հերիք է, որ մարդ գէթ մէկ անգամ տեսնի այդ «պապական պապկերը», որ այդ ծերունին միշտ երևայ նրա աչքին, հրաւիրէ սոսկալ յանցագործութիւնից և օգնել տառապեալներին» («Одесс. Листокъ», № 269).

Սգնիւ գրագէտի այս փոքրիկ յօդուածը մի ընդհանուր հետաքրքրութիւն զարթեցրեց ռուս ժողովրդի մէջ դէպի գիրքը և նայ ժողովուրդը և ժողովածուի արագ տարածմանը նպաստաւոր եղաւ։ Ցեղոյս և Բեսարաբիոյ հայերն անուշադիր չմնացին այս հրաւէրը. այդ ձայնը օտարի ձայն էր, ուստի շուտ լսելի եղաւ. իւրայինների ձայնը անարձագանք թողնող հայը արձագանք տրուեց ռուս գրագէտի կոչին և եռանդով գիրքը տարածելու յօժարութիւնն ունեցաւ։ Փառք և պատիւ մեր սիրելի հայրենակից մեծ. պ. Թոլիբեանին (խմբագիր «Вѣстникъ Винодѣлія»-ի), որ գրքերը ստանալու ու ցրուելու գործը եռանդով յառաջ է տանում, օգտուելով

ՓՈՍՏԱՐԱՆ

Փիլիսի ասիական վաճառատների նոր օդ. նավն «Գեորգի Սաակով» 21.ից 9. դուսնօնի Փիլիսի եկավ Ս. Երեվանի ասիական ապրանքներ։ «Նով. Փիլիսի» յաղագս Փիլիսում նոր ապրանքների մասին։

Դեռևս չի հրատարակված ընդհանուր ցուցակը այն ապրանքների, որոնք ներմուծվել են Փիլիսի մաքսատունից 1896 թվին։ Ամենից շատ ներմուծվել են ապրանքներ Ռուսաստանից, Պարսկաստանից և Եվրոպայից։ Ռուսաստանից ներմուծվել են ապրանքներ 649 ր. 94 կոպ. Ամենից շատ մշակի են ներմուծվել տարբեր գործիքներ 896, ապա մետաղական իրեր 229 ր. 8 կոպ. Իսկ պատրաստի հագուստներ 94, ապա ոսկեգործական ապրանքներ 56 կոպ. Ասում են, թե յուրաքանչյուր մշակի համար ներմուծվել է 965,250 ր. 81 կոպ. Հասարակ մարդկանց համար ներմուծվել է 80,689 ր. 56 կոպ. Ասում, թե յուրաքանչյուր մշակից ներմուծվել է 965,250 ր. 81 կոպ։

ՊՈՍՏՈՆՈՍ

Բերում են Ֆրանսիայից։

ՓԱՐԻԶԻ ՆԱՄԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

— Ֆրանսիայի նախագահ Ֆելիքս Ֆորը մեկնել է Ռուսաստան։ Ֆրանսիական մամուլը մեծ ուշադրություն է դարձնում այդ այցելության վրա։ Ֆրանսիացիները հույս ունեն, որ Ռուսաստանի հետ դաշինքը ավելի կամրապնդվի։ Ֆրանսիական մամուլը գրում է, որ Ռուսաստանի հետ դաշինքը ամենից առաջ ուժեղացնում է Ֆրանսիայի դիրքերը Եվրոպայում։ Ֆրանսիացիները հույս ունեն, որ Ռուսաստանի հետ դաշինքը ամենից առաջ ուժեղացնում է Ֆրանսիայի դիրքերը Եվրոպայում։ Ֆրանսիացիները հույս ունեն, որ Ռուսաստանի հետ դաշինքը ամենից առաջ ուժեղացնում է Ֆրանսիայի դիրքերը Եվրոպայում։

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ռուսական «Новое Время»-ն գրում է, որ Թուրքիայում հայերի դեմ կատարված ջարդերի մասին եվրոպական մամուլում հրապարակված տեղեկությունները չափազանցված են։ Ռուսական «Новое Время»-ն գրում է, որ Թուրքիայում հայերի դեմ կատարված ջարդերի մասին եվրոպական մամուլում հրապարակված տեղեկությունները չափազանցված են։

ՀՈՒՆԱՐԻ ՀԱՐՑԵՐ

Ֆրանսիական մամուլը գրում է, որ Հունարի հարցերը կարգավորվելու են։ Ֆրանսիական մամուլը գրում է, որ Հունարի հարցերը կարգավորվելու

ոսկով, այդ ապահովութեան չափը սահմանելով 15 րուբլու փոխարէն մէկ իմպերիալ։ Այժմ, օգտուելով պետական թղթերի նշանագրերը հաստատելու հրովարտակների որոշումը, Մենք հրամայում ենք նոր պատրաստուող թղթադրամների վրայ փոխած տեսակի նշանագրերը դնել։

ՎԵՆՆԱ.—Ենթադրում են, որ բարոն Գաուչը կրկազմակերպի «ասպիճանաւորների մինիստրութիւն»։

Լանդտագում բոլոր ձախակողմեան պատգամաւորները, բացի խոշոր հողատէրերից, թողին դահլիճը, որով. հետև լանդմարշալը թոյլատրեց կարդալ ընդդիմադրական կուսակցութեան առաջարկութիւնները, որոնք վերաբերում էին Վեննայում տեղի ունեցած դէպքերին։

Կ. ՊՈԼԻՍ.—Նոյեմբերի 17-ին հաստատութեան պայմանների մասին ժողով տեղի ունեցաւ։

ՊՈՐԻԶ.—Գելիէն Ձերեր.Գեսաներին հարցաստորձի ենթարկից միջանի անգամ։

ՎԵՆՆԱ.—Վերջին անկարգութիւն. ների պատճառով նահանգական պատգանի քննութեանը յանձնուած. ները, ազատ են թողուած, թէև նրանց մասին գատական քննութիւնը տակաւին չարունակուելու է։

ԿԱՆԷԱ.—Ձրջող լուրերի համաձայն, դեսպանները,—որպէս զի արագացնեն խնդրի լուծումը,— հիւպատոսարաններից պահանջում են պարզ իրերի դրութեան մասին մանրամասն տեղեկութիւններ։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար № 1 գնացքը Բագուից մեկնում է դէպի Թիֆլիս ցերեկուայ ժամը 4-ին և 1 րոպէին, Թիֆլիս է ժամանում առաւօտեան ժամը 8 ին և 30 րոպէին. մեկնում է Թիֆլիսից դէպի Բաթում առաւօտեան ժամը 8 ին և 51 րոպէին և Բաթում է հասնում երեկոյեան ժամը 8 ին և 28 րոպէին։

Մարդատար № 3 գնացքը Բագուից մեկնում է գիշերուայ ժամը 12 և 6 րոպէին, Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 7-ին և 10 րոպէին, Թիֆլիսից մեկնում է դէպի Բաթում երեկոյեան ժամը 7 ին և 55 րոպէին և Բաթում է հասնում առաւօտեան ժամը 8 ին և 28 րոպէին։

Մարդատար № 2 գնացքը Բաթումից մեկնումէ դէպի Թիֆլիս առաւօտ ժամը 8-ին և 15 րոպէին, Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 8-ին և 34 րոպ. Թիֆլիսից մեկնում է դէպի Բագու երեկ. ժամը 9-ին և 34 րոպ. և Բագու է հասնում ցերեկուայ ժամը 1ին և 2 րոպէին։

Մարդատար № 4 գնացքը Բաթումից դէպի Թիֆլիս է մեկնում երեկոյեան ժամը 8ին և 35 րոպ.։ Թիֆլիս է հասնում առաւօտեան ժամը 9ին և 13 րոպ։ Թիֆլիսից մեկնում է դէպի Բագու առաւօտեան 11 ժամին և Բագու է հասնում առաւօտեան ժամը 6ին։

№ 7 գնացքը մեկնում է Թիֆլիսից դէպի Միխայլովօ ցերեկուայ ժամը 3ին և տեղ է հասնում երեկոյեան ժամը 6ին և 32 րոպէին։

№ 8 գնացքը մեկնում է Միխայլովոյից դէպի Թիֆլիս գիշերուան ժամը 3ին և 45 րոպ. և հասնում է տեղս առաւօտեան ժամը 7 ին և 30 րոպէին։

Պոստային հանրակառքերի հաղորդակցութիւնը Թիֆլիսի եւ Վլադիկաւկազի միջեւ, սկսած Նոեմբերի 1 ից մինչեւ 1898 Յունի մայիսի 1-ը։

ԹԵՖԼԻՍԻՑ—5 տեղանիկառքը մեկնում առաւօտ. ժամը 8 ին (գիշերում է Մլէթում) և հետևեալ օրը, երեկոյեան ժամը 8 ին, հասնումէ Վլադիկաւկազ 6 տեղանի կառքը (առանց գիշերելու) մեկ նում է կէսօրից յետոյ ժամը 3.ին և հասնումէ Վլադիկաւկազ յաջորդ օրը երեկոյեան ժամը 5.ին և 35 րոպէին։

Վլադիկաւկազ.—5 տեղանի կառքը մեկ նումէ առաւօտեան ժամը 8.ին (գիշերում Դուդաւրում) և հասնումէ տեղս յաջորդ օրը երեկոյեան ժամը 8.ին և 15 րոպէին։ 6 տեղանի կառքը (առանց գիշերելու) մեկնումէ երեկոյեան ժամը 7.ին և հասնումէ տեղս յաջորդ օրը երեկոյեան ժամը 8.ին և 30 րոպէին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ԲՐԻՒՅ ՎԵՍԵԼՕՎՍԿՈՒ

„ СтихотворныЕ ПереводЫ “

Ժողովածուի առաջին գրքոյկը, որի մեծ մասը բռնում են Շահազիզեանի, Դուրեանի, Ծատուրեանի, Յովհաննիսեանի և Լեռնցի բանաստեղծութիւնները։

Գինն է 50 կոպէկ

Թարգմանչի հասցէն МОСКВА Чистопрудный бульваръ д.Балашова 10—5

ԼՈՑՍ ՏԵՍԱՒ

ՊԱՏ ՕՐԱՑՈՑՑ

[տասերորդ տարի]

ԳԻՆՆ Է 50 ԿՈՊ.

Դիմել Թիֆլիս գիւտ ա. ք. Ազանեանցին

(846) 5—4

ԿՈՉՈՐՈՒՄ

Վ Ա Ճ Ա Ռ Ք Ո Ղ Ո Ւ Մ Ը

Իշխանուհի Խոջամիրեանեանի ամբարանոցը իւր այգով։ Գետնի տարածութիւնը մօտ 1000 քառ. սաժէն է։ Գինը տեղեկանալ իշխանուհի Խոջամիրեանեանի բնակարանում, Սուդերնայա փող. № 46, օրուայ ժամը 11-ից մինչև 12-ը և երեկոյեանժամը 7-ից մինչև 8-ը ամեն օր։

(847) 3—2

Բարձր դասակ իկանայք բզս և գեղատութեամբ ամենանշանաւոր գերասանուհիները հրաժարուեցին գործածել КОЛДКРЕМЪ(Cold Creme), *որ գառնահամ է և իւղալի տեսք է տալիս դէմքին։ Դրա տեղ նրանք գործ են ածում*

CREME-SIMON

(Գրեմ-Սիմոն) *դեղագիտական հոտ ունեցող արտադրութիւնը, որ երբէք չի փչանում և պնդացնող ու փափկացնող յատկութիւնների հետ միասին առաւելութիւն ունի պահպանելու դէմքի գոյնի չնորհալիութիւնն ու երիտասարդական թարմութիւնը։*

LA POUDRE SIMON

(Պուդր Սիմոն) LE SAVON A LA CREME SIMON (Օճառ Սիմոնի) *ունին նոյն հոտը և լրացնում են նրա զարմանալի յատկութիւնները։*

J. SIMON., 13 rue Grange Bateliére. Paris. *Մաս-մաս վաճառւում է վարսավիրների, պալր ֆիւմերների և դեղագործների մօտ։*

(М.) 20—9

ԹԻՖԼԻՍԻ ԿՐ ՈՒԺՈՂ

Շաբաթ, Նոյեմբերի 22-ին

ԳՕՖՈՒՏ

Կանանց բժշկական կուրսերին կից հիմնուելիք հանրակեցարանի «Արտիստիկական Ընկերութեան» անդամները կրնկրկայացնեն

ՎՏ ԲԵԳԱԽՏ

պ. Մեսանիցկու։ Ներկայացումից յետոյ տեղի կունենան պարեր։ Ներկայացման գները պարերին էլ մասնակցելու համար 4 ր. 10 կ. մինչև 2 ր. 60 կ.։ Միմիայն պարերին մասնակցելու համար 2 ր. 10 կ.։ Վերնայարկում նստելու համար 2 ր. 10 կ. մինչև 1 ր. 60 կ.։

Տոմսակները կարելի է ստանալ մինչև Նոյեմբերի 20.ը գրավաճառանոցներում և կին-բժիշկների մօտ։ Նոյեմբերի 20 ից—«Թիֆլիսի կուժողկում»։

(Խմբ.) 8 —1

(М.) 53—45



М.) — 20—8

ԱՄԵՆԱՑԱՑՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ



ԹՌԵՒԱՒՈՐ



ԴԱՇՆԱՄՈՐՆԵՐ

Ներարմոնիումներ, ջութակներ կիթառֆլէյտներ, կլարնետներ, ծայնախտզներ, լարեր եւ այլն եւ այլն

Բոլոր տեսակ գործիքների համար գինը կարելի է վճարել մաս առ մաս.

ՆՈՐ-ՊԵՅՍԿՈՒԴԱՆՏԵՐԸ

ՈՒՂԱՐԿՈՒՄ ՆՆ ԶՐԻ

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՀԱՑՆԱԽԱՂԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ

ԴԵՊՕ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

МУЗЫКАЛЬНОЕ ДЕПО

Б. М. МИРИМАНЯНЪ

ТИФЛИСЪ, ДВОРЦОВАЯ УЛ.

397 30—26

(М.) № 52242 8—1.

Օրանով խնդրում եմ այն արժ. հ ո գ ե ր ե ր ի ն և գ ո ր ո ն ն ե ր ի ն որոնք **„ՄՈՒԱՅՈՒԱԾ ԱՇԽԱՐՀ“** *գրքերս ստացել են վաճառելու, աշխատանն որքան կարելի է շուտ տարածելու և արդէն վաճառուածի գինն ինձ հասցնելու, որովհետև մի միւս աշխատութիւններիս տպագրութիւնն իրրև հայ հասկացողի աշխատութեան տպագրութիւն, կանգ չառնի երկար ժամանակ։*

Գուցէ գտնուին ցանկացողներ աշխատութիւններս իրենց ծախքով տպագրելու, այդպիսիները թող դիմեն ինձ։ Եթէ գտնուին նաև մեր ժողովրդի մէջ ընթերցանութիւն տարածելու գեղեցիկ միտքը յայտնողներ, այդ պարոններին խոստանում եմ ամենից շատ % զիջումներ։

Հասցէս—Նիկոլայիսկայա փող. տան № 10.

10—7 ՍԱՐԿ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՀՈՒՂՈՒՐԵԱՆՑԻՆ

ԲԱՖՖԻ

„ՍԱՄՈՒԷԼ“ *Ա. Բ. եւ Գ. գիրքը*

„ԳԱԻԹ-ԲԷԿ“ *Ա. Բ, եւ Գ. գիրքը վերջաբանով*

Ե Ւ

„ԿԱՅԾԵՐ“-Ի *երկրորդ լիակատար հատորի*

ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒԹԻՒՆԸ ՅԱՐՈՒՆԿԻՈՒՄԸ

մինչև **„ՍԱՄՈՒԷԼԻ“-Ի** *լոյս տեսնիլը.*

Սմին մի գրքի գինն է **2 Ր. 50 Կ.**

Երկրի գինը միասին **6 ՐՈՒԲԼԻ.**

«ՍԱՄՈՒԷԼ»-ը մամուլի տակն է և լոյս կը տեսնի Յունուար ամսին։

Մամուլի տակն է և չուտով լոյս կը տեսնի **«ՈՍԿԻ ՀՈՂՈՑ»-ը**

արժէ **70. ԿՈՊ**

Յանկացողները կարող են դիմել թէ բաժանորդագրութեան և թէ Բաֆֆիի վաճառելի երկերի համար.

Ռուսիայում

Тифлисъ, Аршаку Раффи.

Արտասահման

M.me Raffi 270, Uxbridge Road, Shepherds Rush LONDON W

(834) 10—7

ՅԱՇԱՐԱՆ „ՊՈՒՐ-ՂՎԻՆՕ“

ԳՈԼՈՎԻՆՍԿԻ ՊՐՈՍՊԵԿՏ

ՏՈՒՆ ԻԾ. Կ. Ի. ԲԱԳՐԱՏԻՈՆ-ՄՈՒԽՐԱՆՍԿՈՒ

ՅԱՇԸ. 1) 4 տեսակ և մի բաժակ օղի, ½ շիշ գինի, կամ 1 շիշ գարեջուր և մի գաւաթ սուրճ—մէկ րուբլի։ 2) 3 տեսակից-մի բաժակ օղի, ½ շիշ գինի, կամ մէկ շիշ գարեջուր և մի գաւաթ սուրճ—80 կոպ.։ 3) երկու տեսակից, մի բաժակ օղի ½ շիշ գինի, կամ 1 շիշ գարեջուր և մէկ գաւաթ սուրճ—60 կոպ, և 4) երկու տեսակից, մի բաժակ օղի և մի գաւաթ գարեջուր կամ մի բաժակ գինի—40 կոպ.։

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԽՈՀԱՆՈՑ։ Կերակուրները որպէս Եւրոպական նմանապէս և Ս.ոիական ու Տնղական։ Գներըմատչելի են։

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԽՄԻՒՔՆԵՐ։ ՕՂԻՆԵՐ. Սմիրնովի և Պապովի, Շրիտերի և Սարաջևի—բաժակը 5 կոպ.։ Կոնեակ, Ջուբրովկա, քինաքիաժի օղի, անղլիական գառն և այլն—բաժակը 10 կոպ.։ Գինու մի գաւաթը 5 կոպ.։ Մի շիշ «ԿԱԽԵԹԻԱ» 40 կոպ-ից սկսած ½ շիշը 20 կոպ-ից։ Իշխան Բագրատիան-Մուխրանսկու գինիները 40 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխան Ջորջաձէլին 38 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իշխ. Ճաւճաւաձէլինը 30 կոպ-ից սկսած և աւելի թանկ. իսկ ½ շիշը 15 կոպ.։

ԳԱՐԵՋՈՒՐ ՎԵՏՃԵԼԻ Գաւաթը 5 կոպ, շիշը 15 կոպ. Բարական կաս՝ շիշը 15 կոպ.։ Լիմնադ, սիճոն և մրգեղէնի ջրերը ½ շիշը 10 կոպ.։ Թէյը և կաթը 5 կոպէկ. սուրճը 10 կոպ։

Միևնոյն տեղում առանձին դահլիճում կան 5 հատ ֆրէյբերգի բիլիարդ ներ, ժամը 30 կ։ Նարդին և շախմատը ցերեկով 15 կ. իսկ գիշերը 20կ. Ճաշարանն ունի և կահաւորուած սենեակներ 40 կոպէկից մինչև 1 ր. 50 կ. իւրաքանչիւր օր ու գիշերուան համար. ամիսը 10 ր, մինչև 30ր։

Տարբանօր՝ ԵԴՈՐ ՄԱՄԻԱՆԱՑԻԼԻ։

(795) 20—12

Дозв.цензурою, Тифлисъ, Ноября 19-го дня 1897 г., Տպարան Ա. Մելիք-Շահնազարեանցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейтера